ըստ Օրինաց հայոց, և Շղթայիւք կապեցաք մէջ բնական բնութեան քոյ ինքնակալ կամք և ինքնակամ արարմունն քոյ, զի ընդ դէմ Օրինաց ոչ ունես իշխանութիւն ասել ումեք կաղ և կամ մօրուս։

Տուաք իշխանութիւն քեզ լինիլ բերան ամենայն հայոց, և ամրափակեցաք բերան քոյ զի մի խօսիցես խօսք մի ընդ դէմ Օրինաց հայոց։

Տուաք իշխանութիւն քեզ բանալ պատերազմ ընդ դէմ թշնամեաց, և խօսել խաղաղութիւն ընդ բարեկամս հայոց հրամանաւն տանն հայոց։

Տուաք իշխանութիւն քեզ տալոյ կեանս մահապարտից 'ի մի տարոյն մինչև յօթն արանց, եթէ չիցէ յատկապէս ընդդէմ կամաց տանն հայոց, և ոչ ունիլ իշխանութիւն քոյ 'ի վերայ հերոյ առն միոյ բառնալ 'ի գլխոյ յումեքէ ընդ դէմ Օրինաց հայոց։

Տուաք իշխանութիւն դէտապետութեան քեզ ազգ առնելոյ քոյ տանն հայոց, վասն մերձենալոյն թշնամեաց և վասուց և նախատանաց ընդ յազգս և յաշխարհս հայոց, լեր պատրաստ մի գուցէ թշնամին աւերեսցէ յաշխարհ և նեղիցէ ժողովուրդս հայոց, զի վասս նոցայ 'ի ձեռանէ քումմէ խնդրեցիս։

Տուաք իշխանութիւն քեզ հրամայել 'ի վերայ ամենայն զօրաց և զօրապետաց հայոց ըստ Օրինաց, նա ևս ունիս իշխանութիւն բանիւ և